Քաղվածք
Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/24498/02/23

ՎՃԻՌ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

09.10.2023թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան), հետևյալ կազմով՝

նախագահությամբ՝ դատավոր Ս. Երիցյանի

գրավոր ընթացակարգով քննելով քաղաքացիական գործը, ըստ հայցի <<Ռ Քոնսալթ>> ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01027718, պետական գրանցման համար՝ 264.110.1186374, հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Տ. Պետրոսյան փ., 48/7) (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության հրպ., Կառավարական տ. 3) (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ պայմանագրի միակողմանի լուծման մասին գրությունն ոչ իրավաչափ՝ անվավեր ճանաչելու, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՎՃՌԵՑ

1. <<Ռ Քոնսալթ>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ պայմանագրի միակողմանի լուծման մասին գրությունն ոչ իրավաչափ՝ անվավեր ճանաչելու, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել՝

անվավեր ճանաչել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ 27.07.2023 թվականի թիվ ԱԵ//16752-2023 գրությամբ՝ 11.10.2021 թվականին կնքված ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2021/6ՏՀ ծածկագրով գնման պայմանագրի միակողմանի լուծումը:

անվավեր ճանաչել <<Ռ Քոնսալթ>> ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղար Ա. Երիցյանի 04.08.2023 թվականի N 1567-Ա հրամանը:

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից հօգուտ <<Ռ Քոնսալթ>> ՍՊԸ-ի բռնագանձել 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ, որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Հայցվոր <<Ռ Քոնսալթ>> ՍՊԸ-ին վերադարձնել 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամը /<<Արդշինբանկ>> ՓԲԸ-ի 18.08.2023 թվականի թիվ 230818147366049 վճարման հանձնարարական/, որպես ավել վճարված պետական տուրքի գումար:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 21.08.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**